ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

No 41-Ա «12» 09 2023 թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի № 34-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի № 661-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 7-րդ ենթակետը՝

**Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ**

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության սպորտի քաղաքականության վարչության զանգվածային սպորտի և ֆիզիկական դաստիարակության, մանկապատանեկան սպորտի և սպորտի բարձրագույն նվաճումների բաժինների գործունեությունը դադարեցնել և ստեղծել նոր՝ քաղաքականության մշակման և վերլուծությունների, ծրագրերի իրականացման և մարզական կազմակերպությունների համակարգման բաժիններ:

2. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի հունիսի 18-ի № 34-Լ հրամանի հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

9/12/2023

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169 Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարի
2023 թվականի .....ի
№ ----Լ հրամանի

«Հավելված
Հայաստանի Հանրապետության
կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարի
2020 թվականի հունիսի 18-ի
№ 34-Լ հրամանի

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) սպորտի քաղաքականության վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին», «Մանկապատանեկան սպորտի մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով, Հայաստանի Հանրապետության Կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով, Նախարարության կանոնադրությամբ, սույն

կանոնադրությամբ, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ Նախարար) և Նախարարության գլխավոր քարտուղարի (այսուհետ՝ Գլխավոր քարտուղար) հրամաններով ինչպես նաև այլ իրավական ակտերով:

3. Վարչության կանոնադրությունը հաստատում, դրանում փոփոխություններ և լրացումներ է կատարում Նախարարը:

4. Վարչության կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում է Նախարարը:

5. Վարչության աշխատակիցները կարող են ընդգրկվել պետական կառավարման բնագավառում որոշակի գործառույթների իրականացման նպատակով ստեղծվող հանձնաժողովների կազմում, աշխատանքային և այլ խմբերում:

6. Վարչության անվանումն է՝ Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության սպորտի քաղաքականության վարչություն:

## 2. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

**7. Վարչության նպատակներն են՝**

1) ֆիզիկական դաստիարակության և զանգվածային, մանկապատանեկան և մեծ նաճումների սպորտի, այդ թվում՝ ադապտիվ, դպրոցական և ուսանողական սպորտի, պետական քաղաքականության նպատակների և առաջնային ուղղությունների սահմանումն ու իրականացումը,

2) ֆիզիկական դաստիարակության և մարզիկների պատրաստման համար անհրաժեշտ ժամանակակից համակարգերի և ենթակառուցվածքների ստեղծումն ու զարգացումը, օլիմպիական շարժման զարգացմանն աջակցումը,

3) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացման, անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացման, բնակչության առողջ ապրելակերպի

ձևավորման և ակտիվ հանգստի կազմակերպման գործին, ինչպես նաև ֆիզիկապես կոփված, կրթված, և առողջ սերնդի ձևավորմանն աջակցումը,

**8.Վարչության խնդիրներն են՝**

1) ֆիզիկական դաստիարակության և զանգվածային, մանկապատանեկան և մեծ նվաճումների սպորտի քաղաքականության մշակված համակարգի հանրայնացումը, զարգացման հայեցակարգերի և նպատակային ծրագրերի կիրարկումը,

2) մարզաձևերի ազգային ֆեդերացիաների, մարզական հասարակական կազմակերպությունների գործունեությանը աջակցումը,

3) արտադպրոցական ուսումնամարզական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների աշխատանքների համակարգում,

4) մանկապատանեկան սպորտի բնագավառի մասնագետների պատրաստմանն աջակցելը, ինչպես նաև վերապատրաստման և ատեստավորման աշխատանքների կազմակերպումը,

5) բնակչության ֆիզիկական դաստիարակության, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց՝ ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար նպաստավոր պայմանների ստեղծումը:

## 3. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

**9. Վարչությունն իր լիազորությունների շրջանակներում իրականացնում է հետևյալ գործառույթներն՝ ըստ բաժինների:**

**1) Քաղաքականության մշակման և վերլուծությունների բաժինը՝**

ա. ապահովում է զանգվածային սպորտի և ֆիզիկական դաստիարակության, մանկապատանեկան սպորտի և մեծ նվաճումների սպորտի (այսուհետ՝ Սպորտի ոլորտ)

գործունեությանը վերաբերող օրենսդրական և այլ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքները, ընդհանրացնում իրավական ակտերի գործնական կիրառումն ու ներկայացնում առաջարկություններ Սպորտի ոլորտում Հայաստանի Հանրապետության օրենսդրության կատարելագործման վերաբերյալ,

բ. վերլուծում է ոլորտի քաղաքականությունը, ուսումնասիրում քաղաքականության միտումներն ու օրինաչափությունները,

գ. ապահովում և իրականացնում է ոլորտում հայեցակարգերի ու պետական նպատակային ծրագրերի մշակումը, ինչպես նաև քաղաքականության ռազմավարության աշխատանքները և իրականացնում դրանց մոնիտորինգ,

դ. մասնակցում է զարգացման երկարաժամկետ և միջնաժամկետ պետական ծրագրերի մշակման աշխատանքներին,

ե. օրենքով սահմանված կարգով մասնակցում է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մշակման աշխատանքներին, ինչպես նաև ապահովում է Սպորտի ոլորտում միջազգային միջգերատեսչական պայմանագրերի, Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների կատարմանը,

զ. իրականացնում է միջազգային փորձի ուսումնասիրություն և ըստ անհրաժեշտության ներկայացնում առաջարկություններ,

է. ապահովում է գիտաժողովների, համաժողովների, սեմինարների (այդ թվում՝ միջազգային) և այլ միջոցառումների մշակման աշխատանքները,

ը. ապահովում է Սպորտի ոլորտում պետական նպատակային ծրագրերին համապատասխան տեղեկատվական, գիտամեթոդական, ուսումնական, գիտական, վերլուծական և այլ բնույթի ծրագրերի մշակման աշխատանքները,

թ. ապահովում է Սպորտի ոլորտում պետական կրթական չափորոշիչների մշակաման աշխատանքները,

ժ. իր իրավասության շրջանակներում մասնակցում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի մշակման աշխատանքներին,

ժա. վերլուծում և ամփոփում է ոչ ֆինանսական ցուցանշների ընդունման գործընթացը, ինչպես նաև մասնակցում է պետբյուջեյի կատարումն ապահովող Հայաստանի Հանրապետության կառավարության հանձնարարականների կատարման աշխատանքներին,

ժբ. ապահովում է Հայաստանի Հանրապետության կառավարության տարեկան գործունեության ծրագրի, գերակա խնդիրների սահմանումը և իրականացումը,

ժգ. կազմակերպում և անցկացնում է հանրային քնարկումների,

ժդ. իրականացնում է Նախարարի, և Գլխավոր քարտուղարի հրամաններով, վերջիններիս և Վարչության պետի հանձնարարականներով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթներից բխող այլ լիազորություններ:

**2) Ծրագրերի իրականացման բաժինը՝**

ա. աջակցում է հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային սպորտային համագործակցության զարգացմանը,

բ. ապահովում և իրականացնում է հանրապետական զանգվածային մարզական բնույթի ծրագրերի աշխատանքները,

գ. ապահովում է պետական կառավարման տարածքային մարմինների հետ համատեղ Սպորտի ոլորտի տարածքային քաղաքականության իրականացումը,

դ. աջակցում է ազգային սպորտային խաղերի տարածմանն ու զարգացմանը, սպորտաժամանցային գործունեության բազմազանության ապահովմանը,

ե. վարում է Սպորտի ոլորտի աշխատանքների վիճակագրությունը,

զ. իրականացնում է Սպորտի ոլորտի զարգացմանը նպաստող քարոզչություն,

է. այլ գերատեսչությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ մասնակցում է սովորողների ֆիզիկական կուլտուրայի, դպրոցական և ուսանողական սպորտի, զանգվածային միջոցառումների, հանգստի ու

ազատ ժամանցի ծրագրերի մշակման աշխատանքներին և կազմակերպում դրանց իրականացումը,

թ. համակարգում է «ֆիզիկական կուլտուրա» առարկայի, դպրոցական և ուսանողական սպորտի պետական կրթական չափորոշիչների և դրանց իրականացման աշխատանքները,

ժ. իրականացնում է դպրոցական և ուսանողական սպորտի, «ֆիզիկական կուլտուրա» առարկայի ուսուցման որակի և արդյունավետության մոնիտորինգ,

ժա. քննարկում է իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից ներկայացված առաջարկությունները, դիմումներն ու բողոքները, նպաստում դրանցում արծարծված հարցերի լուծմանը,

ժբ. ապահովում է Սպորտի ոլորտում գիտամեթոդական աշխատանքների իրականացման ծրագրերի համակարգումը,

ժգ. մասնակցում է միջազգային կազմակերպությունների և Նախարարության միջև կնքվող համագործակցության հուշագրերի և ծրագրերի կազման աշխատանքներին,

ժդ. իրականացնում է զարգացման և ռազմավարական ծրագրերից բխող ոլորտային միջոցառումներ,

ժե. իրականացնում է Նախարարի, Նախարարի համապատասխան տեղակալի և Գլխավոր քարտուղարի հրամաններով, վերջիններիս և Վարչության պետի հանձնարարականներով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթներից բխող այլ լիազորություններ:

**3) Մարզական կազմակերպությունների համակարգման բաժին.**

ա. իրականացնում է Նախարարության ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների ուսումնամարզական գործունեության ուսումնասիրություններ,

բ. համագործակցում և մասնակցում է միջազգային սպորտային կազմակերպությունների աշխատանքներին,

գ. աջակցում է Հայաստանի Հանրապետությունում կատարվող մարզական հերթափոխի պատրաստման աշխատանքներին,

ե. կազմակերպում և իրականացնում է Սպորտի ոլորտի վաստակաշատ անձանց, հանրապետական առաջնությունների մրցանակակիրներին, ոլորտի նվիրյալներին և կազմակերպություններին մարզական կոչումների և կարգերի մեդալներով ու դիպլոմներով պարգևատրման աշխատանքները, ինչպես նաև ներկայացնում է պետական պարգևների և պատվավոր կոչումների,

զ. նախապատրաստում է նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիների պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու, պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու և անձնագրերի գործողության ժամկետի երկարացման վերաբերյալ փաստաթղթերը (միջնորդությունները),

է. իրականացնում է Սպորտի ոլորտի կազմակերպման աշխատանքների մեթոդական ղեկավարումը,

ը. քննարկում է իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից ներկայացված առաջարկությունները, դիմումներն ու բողոքները, նպաստում դրանցում արծարծված հարցերի լուծմանը,

թ. սահմանում է Սպորտի ոլորտում գիտատեխնիկական զարգացման ուղղությունները, ինչպես նաև աջակցում է մարզական կազմակերպությունների և պետական մարզական ուսումնական հատատությունների (մարզական մասով) նյութատեխնիկական վերազինմանը,

ժ. ներդնում է վարչական վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) վարման համակարգ ու համապատասխան ռեգիստրների միջոցով վարում Սպորտի ոլորտում վիճակագրությունը, իրականացնում մարզական կազմակերպությունների հաշվառումը՝ անկախ սեփականության ձևից,

ժա. կազմակերպում է պետական և ոչ պետական մարզադպրոցների մարզիչների վերապատրաստման, ատեստավորման և լիցենզավորման գործընթացները,

ժբ. մասնակցում է Նախարարության ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների և մարզական հասարակական կազմակերպությունների բյուջետային և ՄԺԾԾ հայտի կազմման աշխատանքներին,

ժգ. մասնակցում է պետական բյուջեյով նախատեսված ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ գնումների և դրամաշնորհային մրցույթների իրականացման աշխատանքներին,

ժդ. համակարգում է Նախարարության ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմնի խորհրդի ձևավորման աշխատանքները,

ժե. ամփոփում է մարզական կազմակերպությունների կողմից ներկայացված ոչ ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ հաշվետվությունները,

ժզ. իրականացնում է Նախարարի, Նախարարի համապատասխան տեղակալի և Գլխավոր քարտուղարի հրամաններով, վերջիններիս և Վարչության պետի հանձնարարականներով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթներից բխող այլ լիազորություններ:

## 4. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

10. Վարչության ղեկավարը հաշվետու է Նախարարին:

11. Վարչության գործունեությունը կազմակերպում, ղեկավարում և համակարգում է Վարչության պետը: Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է վարչության պետի տեղակալը, իսկ նրա բացակայության դեպքում՝ բաժնի պետերից մեկը:

12. Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում են բաժնի պետերը:

13. Վարչության պետը, Վարչության պետի տեղակալը, Վարչության բաժնի պետերը և մասնագետները համարվում են քաղաքացիական ծառայողներ:

14. Վարչության պետի և Վարչության աշխատակիցների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների դրույթները սահմանվում են քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով:

## 5. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

15. Վարչությունը կազմված է հետևյալ ներքին կառուցվածքային միավորներից՝

1) Քաղաքականության մշակման և վերլուծությունների բաժին
2) Ծրագրերի իրականացման բաժին
3) Մարզական կազմակերպությունների համակարգման բաժին»: